Տ. Տ. ՎԱՉԳԷՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՆԳԻՍՏ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Այսու խոր վշտով հայտնում ենք, որ սույն թվականի օգոստոսի 18-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 7.15-ին, Երևանի Հայրապետական իր առանձնատանը, 86-ամյա հասակում, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սուրբ Օծությունը ծնվել է 1908 թ. սեպտեմբերի 20-ին Բուխարեստում (Ռումինիա), որտեղ իր համալսարանական կրթությունն ստանալուց հետո, 1943 թ., ձեռնադրվել է կուսակրոն հոգևորական՝ ծառայելու Ռումինիայի հայոց թեմում: 1951 թ. ստացել է եպիսկոպոսական աստիճան որպես թեմական առաջնորդ: 1955 թվականին ընտրվել և օծվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ հաջորդելով Գևորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Հանգուցյալ Հայրապետը շուրջ մեկ քառասնամյակ իմաստությամբ և մեծ նվիրումով հովվել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Իր հովվապետության չորս տասնամյակների ընթացքում շինարար կաթողիկոսը ներքուստ և արտաքուստ բարեզարդեց Հայ Եկեղեցին, պատրաստեց Հայ Եկեղեցու բազում հոգևոր սպասավորներ, ամրապնդեց էկումենիկ կապերը քույր Եկեղեցիների հետ, իր հովվապետական այցելություններով եկեղեցական կենտրոններ ու արտասահմանյան թեմեր ներտացրեց փոխադարձ կապերը մայր հայրենիքի և սփյուռքի հայ հավատացյալների միջև՝ ձեռք բերելով միջազգային ճանաչում և հեղինակություն:

1994 թ. հուլիսի 28-ին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով հայ ժողովրդի ազգային արժեքների պահպանության ու զարգացման գործում դրսևորած անձնուրաց նվիրումի և մատուցած բացառիկ ծառայությունների համար Նորին Սրբությանը շնորհվեց Հայաստանի ազգային հերոսի բարձրագույն կոչում:

Հայոց Հայրապետի մահվան տխուր առիթով Մայր Աթոռի միաբանությունը հայտարարում է քառասնօրյա սուգ՝ սկսած օգոստոսի 19-ից:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ս. Էջմիածին,
18 օգոստոսի 1994 թ.